

ՆԱԳԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ռ. Ա. ԻՇԽԱՆՅԱՆ

Դժվար է ասել, թե նաղաշ Հովնաթանը (1661—1722) ավելի շատ գուսան է եղել, թե բանաստեղծ սովորական իմաստով (այսինքն՝ գրավոր խոսքի վապեհ)։ Ինչպես վկայում են նրա կենսագիրները, Հովնաթանը իր ստեղծագործությունները գրել է, ապա նաև ինքը կարդացել ու երգել ընկերական հավաքություններում, խնճուղքներում, հարսանիքներում, ժողովրդական տոնահանդեսներում¹։

Հովնաթանն եղել է կրթված մարդ, զբաղվել է գրչությամբ և ուսուցչությամբ։ Ուսումնասիրողները նրա ստեղծագործությունը, ըստ տաղափական հատկանիշների, երկու մասի են բաժանում. «նրա երգերի մի մասը (խրատական, երգիծական, խնճուղքի) հորինված է բուն հայկական բանաստեղծությունների ձևով, իսկ մյուսը (սիրո, մասամբ՝ խնճուղքի)՝ աշուղական»²։ Իրոք, Հովնաթանի խրատական, երգիծական երգերը և խնճուղքի երգերի զգալի մասը հորինված են հայ միջնադարյան տաղերգության, իսկ սիրո երգերը և խնճուղքի երգերի մի մասը՝ նոր շրջանի հայ գուսանական արվեստի ձևերով։ Հովնաթանի բանաստեղծությունների լեզուն մասամբ համապատասխանում է տաղափական մոտեցմամբ արված վերոհիշյալ բաժանմանը։ Օրինակ, նոր գրական լեզվին առավել մոտ է սիրո երգերի լեզուն, իսկ ավելի դեպի միջին հայերենն ու գրաբարն է հակված երգիծական երգերի և խնճուղքի երգերի մի մասը։

Հովնաթանի լեզուն առանձին ուսումնասիրության չի ենթարկված. այն հատուկենտ բնորոշումները, որ երբեմն տվել են գրականագետները, տպավորության վրա են հիմնված։ Պետք է ասել, որ Հովնաթանի ստեղծագործությունների միջև եղած լեզվական տարբերությունները, ինչպես և այդ տարբերությունների պատճառ հանդիսացող բարբառային, գրաբարյան, միջին հայերենի տարբեր աստիճանի ազդեցությունների առկայությունը բանաստեղծի երկերում բավական դժվարացնում են նրա լեզվի ամբողջական քննությունը։ Դա մի առանձին, ծավալուն ուսումնասիրության նյութ է։ Այստեղ մենք կփորձենք գտնել բառային և քերականական այն առանձնահատկությունները, որոնք հավանաբար կարող են գլխավոր համարվել Հովնաթանի ամբողջ ըստեղծագործության լեզվում, ապա՝ ի հայտ բերել մասնավորապես աշխարհ-

¹ Ն աղ աշ Հ ո վ ն ա թ ա ն, Բանաստեղծություններ, Ժողովածուն պատրաստեցին Ա. Մնացականյան և Շ. Նաղարյան, Ե., 1951, էջ XXIII (այսուհետև էջերը կնշվեն շարադրանքի մեջ)։

² Ն աղ աշ Հ ո վ ն ա թ ա ն, Բանաստեղծություններ, Ա. Մնացականյանի և Շ. Նաղարյանի «Նաղաշ Հովնաթան» ուսումնասիրությունը, էջ XXVI։

Մենք համաձայն չենք այս ճիշտ բաժանմանը տրված «բուն հայկական» և «աշուղական» անուններին, քանի որ երկու դեպքում էլ գործ ունենք բուն հայկականի հետ. միայն մի դեպքում միջնադարյան հայկական, մյուսում՝ նոր գուսանական հայկական։

հարարյան բնույթ ունեցող նրա բանաստեղծությունների լեզվաոճական որոշ հատկանիշներ:

Հովնաթանը շոռոթցի է, նրա մայրենի բարբառը արարատյանն է (Շոռոթում խոսել են արարատյանի մի ենթաբարբառով), բայց նա երկար ժամանակ ապրել ու ստեղծագործել է Թփղիսում: Լավ իմացել է գրաբար, քաջատեղյակ է եղել միջնադարյան հայ տաղասացությանը և յուրացրել նրա լեզվաոճական ավանդույթը: Բացի դրանից, փաստերը ցույց են տալիս, որ Հովնաթանը ծանոթ է եղել Ն. Զուլալի գուսանական երգերին, ուստի նրա ստեղծագործության մեջ ինչ-որ չափով եղել է նաև նորջուղայական գուսանական արվեստի ավանդույթը: Ահա լեզվական այս որակները կարծես միաձուլվել են Հովնաթանի երգերում մերթ նրանցից մեկի, մերթ մյուսի գերակշռությամբ: Այդ ձուլումը, իհարկե, ոչ թե լեզվական տարբեր տարրերի սոսկական գումար է եղել, այլ ստեղծագործական շատ հետաքրքրական միասնություն:

Հովնաթանի լեզվի մի քանի գլխավոր հատկանիշները պարզելու նպատակով հարմար գտանք նկատի առնել հետևյալ բառաձևային և ձևաբանական (քերականական) տարրերի գործածությունը. ա) ցուցականների երկու հրնարավոր ձևաշարքերից մեկի կամ մյուսի գործածության հանգամանք՝ այս, այդ, այն և նրանցով կազմվածները, թե՛ էս, էդ, էն ու սրանցով կազմվածները, բ) էական բայի եզակի 3-րդ դեմքի երկու հնարավոր ձևերից (է և ա) մեկի կամ մյուսի գործածությունը, գ) բայերի ներկայի կազմությունը՝ ում-ո՞վ, թե՛ կու(կ)-ով, գ) գոյականների հոգնակիի կազմությունը՝ -եք, -նե՞ք, թե՛ք, դ) բացառականի կազմությունը՝ է-ո՞վ, թե ց-ով և ե) անձնական դերանունների մի քանի ձևերի գործածությունը:

Ցուցականներից Հովնաթանը ավելի հաճախ գործածում է գրաբարյան այս. այդ, այն-ը և նրանցով կազմվածները. «Այն է դրուստ ուստայ» (10), «Այսօր եղև պայծառ արև» (27), «Այս գիշեր դուռն բաց թողնեմ» (36), «Այս է լաւ վախտն» (66), «Լաւ մարդն այն է, ինչպէս եկեալ է, էլ այնպես գնայ» (161), «Այնպիսի մարդուն շատ գովասանք տուր» (88), «Մկներն այսօր խիստ են ուրախ» (88) և այլն: Բայց քիչ չեն նաև արևելյան ժողովրդախոսակցական էս, էդ, էն-ը ու սրանցով կազմվածները. «էդ ինչպես դատաստան է» (10), «Անունս դրեցիր էն դամն» (10), «էն ժուկն ասեմ սրտով ժամ» (141), «Բո բանն էնտեղ եղև յայտնի» (111), «էնչափ էլ հալ՝ փլաւ, թութուն» (114) և այլն:

էական բայի (նաև օժանդակի դերում) եզակի երրորդ դեմքի ձևը հիմնականում է-ն է. «Ունքերդ կապել է կամար կրակով» (5), «Աչքերդ վառել է պայծառ ճրագով» (5), «Ժոցդ ծով է» (21), «Սիրտս եարալու է» 30, «Տեսնեմ նա ով է» (84) և այլն, թեև հանդիպում է նաև արևելահայ բարբառներին հատուկ ա ձևը. «Եկ ինձ մի աներ աւարայ. Այսչափ բաներս քեղ համար այ» (20), «Ունքերդ վրայ հրեղէն կամար այ» (42), «Պինդ կու պահես, աջա՞ք, էդ ո՞ւմ համար այ» (42), «Թումանը շաղ այ, միտքը խիստ կաղ այ» (131): Բայերի ներկայի ավելի հաճախ կազմում է միջին հայերենին հատուկ, բայց և արևմտահայ բարբառներում ու Թփղիսի բարբառում առկա կու (նաև կ) եղանակիչով. «Դու մինակ կու խմես ու կանես անուշ» (5), «Ուշ ու խելք կու տանեն մարգի» (12), «Երբ կու տեսնեմ երեսիդ խալն, Մուշկուլ ա փէրիշան

կելնի իմ հալն» (18), «Կարմիր երեսդ կու փայլի» (21), «Ղալամ ունքերդ կու խաղայ» (36), «Մեծ պասն կուգայ» (106), «Մարդն կու շինեն քոր ու կուր» (104) և այլն, բայց և քիչ չեն արևելահայ բարբառներին (նաև Թուրքիայի բարբառին) հատուկ ում-ով ներկայի վերլուծական ձևերը. «Քո սուրդ ինձան է՞ր ես գողանում» (16), «է՞ր ես կարմիր երեսդ ծածկում, Չարսաւդ վերադ հաւաքում, նաղաշին սիրտն ես տապակում» (48), «Խիստ շատ եմ աղաղակում» (52) և այլն:

Հոգնակիին տվելի հաճախ կազմվում է գրաբարյան կամ միջին հայերենին հատուկ ձևերով. «Մատունքդ բարակ թափած մոմերու» (6), «Մկունք բերին ալիւր, եղ, խին» (38), «Հարբ և եղբարբ և մեծ պարոնայք» (159), «Սուրահիքն տուր, շուշեքն լից բեր» (160), «Քահանայք տրտնջան» (120), «Եղբայրք սլատուական» (157), «Ընկերք միաբան» (178) և այլն, թեև բարբառներին հատուկ (նաև՝ աշխարհաբարյան) եր-ով ու ներ-ով ձևերն էլ քիչ չեն. «Բոլոր խալ ունիս սիահ ծամեր» (6), «Իմ աչքերն արտասուօք կու լայ» (7), «Ունքերդ կապած կամար» (23), «Կարասներն բաց», «Քեֆերս է հասել» (160), «Այսօր սեղաններ բերէք, բացէք» (175) և այլն:

Բացառականը գերազանցապես կազմվում է միջին հայերենին բնորոշ (գրաբարյան) է հոլովակերտիչով, որ նաև առկա է արևմտահայ խոսքում և Թիֆլիսի բարբառում. «Ինձ հանեցիր իմ գործ ու բանէն» (8), «է՞ր են ինձան է հեռանալիս...» (15), «Կարմիր վարդէն տուր ինձ խաբար» (53), «Փախիր ի շարէ» (89), «Հոգի-հաւատէ կու հանի» (108), «Ժամհարի ձեռնէն կանչեն հարայ» (109), «Հայէ-թուրքէ խիստ ես դու վախ» (114) և այլն, հազվագյուտ են արևելահայ բարբառներին ու ժողովրդա-խոսակցականին հատուկ ց-ով ձևերը. Մեծ մասամբ առաջադասական է այդպես կազմվում՝ «Առաւօտուց ծոցիդ վարդն կու փովի» (18), «Առաւօտուց երկնից ցօղն կարմիր» (24), «Առաւօտուց մեկ մի տեսայ դարդարած» (54) և այլն:

Անձնական դերանունների զուտ գրաբարյան ձևերից գործածված են նո-րա, իւր, մեք, նոցա, իւրեանց. «Նորա սիրոյ կրակովն» (24), «Նորա համար եմ հանայ-հանայ» (69), «Իւր շոր գլուխն կու մնա միայն» (84), «Նոյնպէս և մեք ճաշակեցաք» (180), «Նոցա սիրովն դինով եմ» (14), «Նոցա տնադ ու սուտ բանէն» (110), «Իւրեանց կապած սուտ օրենքին» (101) և այլն:

Բացի բերված ձևերից, Հովնաթանի լեզվում գրաբարյան մի շարք ուրիշ տարրեր էլ կան: Օրինակ, զգալի քանակ են կազմում գրաբարյան սեռական-տրական հոլովաձևերը. «Ես մնացի կարօտ ետ տալոյ համար», «Տեւեմելոյ համար» (5), «Մէկ ձեռնիդ գինոյ թաս» (55), «Կենդանեաց և ննջեցելոց ողորմութիւն խնդրեցէք» (182), «Հոգւոց մեռոց տացէ երկնից արքայութիւն» (183) և այլն: Շատ նկատելի են նաև գրաբարյան գործիականի ձևերը. «Քո ձեռքն մեկ գիր ես դրել» (8), «Գովեմ սրտիւ» (11), «Տեսօք են ամէն հասարակ» (12), «Վաղիւն ոչ գիտես, թէ զինչ ծնանի» (170), «Սեղանն լի է բարևաւ» (172), «Թասերն կարգաւ բոլոր է» (173) և այլն: Շատ են բայի հոգնակի երրորդ դեմքի մէ վերջույթով ձևերը. «Եկ գնամք բախչէն» (23), «Նստեմք մեջլիս, տամք կուռն կուռն» (25), «Ծոցդ բանամք» (38), «Եկ միատեղ նստեմք սեղան» (51), «էնչափ խմեմք, որ լուսանայ» (176) և այլն:

Կան նաև գրաբարյան բազմաթիվ ուրիշ ձևեր: Շատ են գրաբարյան բառերը և բառաձևերը (այսինքն՝ գրաբարից և ոչ բարբառներից սերող), ինչպես՝ ալրել, ամենայն, ծածուկ, տխուր, համբուրել, բարձ, այգի, կաւմաւալայլ,

կարօտ, պայծառ, բարև, ուրախություն, մանաւանդ, առաւել, տգէտ, խռնարճ, ուղորմելի, ձիւն, արեգակ, ապառաժ, նորատունկ, ցնծութիւն, նվաստ, սակաւ և շատ ու շատ ուրիշներ, որոնք հետո դարձան նոր գրական լեզվի մշտական ռադադրիչները: Հովնաթանի լեզվում կան նաև գրաբարյան բառեր, որոնք հետո շանցան աշխարհաբարի մեջ, օրինակ, հանապազ, յորժամ, պաղպաղակաւ, աստ, ապեցնիազ, յարկանել, զեցնալ (զեցնուլ), զգեցնուլ, պարտ է և այլն:

Դրաբարի ամբողջական խոսքի հատկանիշներ ամենից ավելի հանդիպում ենք խնճուղքի տաղերում և ամենից քիչ՝ սիրո երգերում: Բայց այս վերջիններում էլ հազվադեպ չէ, որ հանդիպում են այսպիսի տողեր ու արտահայտություններ. «Յայտնեցաւ գարուն, հարաւ հնչեաց, Մառն կանաչեցաւ ծաղկեաց» (69), «Պատկեր մի տեսի լուսնի նման» (6), «Նոր ծաղկեցաւ ծառն, դարունն էհաս» (15), «Ուրախութեան դքեղ գովեմ» (21), «Ո՛վ նման ես արևական» (75) և այլն, ընդ որում, սիրո երգերի մեջ գրաբարյան (կամ գրաբարաներգ) արտահայտությունները լինում են տաղերի ամենասկզբում:

Խնճուղքի տաղերի մեջ ունենք դրաբարյան կամ գրաբարաներգ (այսպիսին ոչ հետևողական ու մաքուր գրաբար) ամբողջ հատվածներ և նույնպես մեծ մասամբ բանաստեղծությունների սկզբի մասերում.

Յաւուրս գարնան եղանակին
Փթթեալ ծաղկեցաւ ալզին,
Հնչէ քաղցր ձայն տատրակին.
Ելէք, եղբա՛րք իմ, ցնծալով,
Ուրախութեամբ և սլարելով,
Մափս-ծափի յարկանելով:

Որպէս որ երամս աղանեաց
Խորհուրդ արարեք հետ միմեանց,
Ժողովեցէք զգինիս զառանց,
Զենէք, եղբա՛րք իմ, ցնծալով (164):

Սա մասամբ «աղավաղված» կամ աշխարհաբարացած գրաբար է, բայց և, ինչ խոսք, ավելի շատ գրաբար: Նույն տաղի շարունակության մեջ արդեն ժողովրդական խոսքի աղղեցությունն ավելի ուժեղ է, և ըստ էության ունենք արդեն աշխարհաբար.

Վատ մարդն դուք մէջ միք բերել,
Նա մէկ խօսքի չի համբերել
Կամի ձեր մեջլիսն ավիրել,
Բա՛ց թողէք, եղբարք իմ, ցնծալով:
Նորահաս մանկունք հանճարեղ,
Խելքն բոլոր, խօսքն համեղ,
Զեռացներն վարդ ու զամբեղ,
Հոտ առէք, եղբարք իմ ցնծալով... (նույն տեղում):

Այսպես է խնճուղքի բոլոր տաղերում՝ առաջին տունը կամ երկու տնե-
րը հորինված են գրաբարակերպ հայերենով, ապա՝ աշխարհաբար կամ նրան
փոխ լեզվով: Սրանց նման են նաև խրատական տաղերը, որոնց միջին մա-
սերում էլ հաճախ կան գրաբարյան տողեր. ահա այդ տաղերից մեկի 6-րդ
տան երկու տողը.

Վերջն հայեցես դու ամենայն բան,
Առանց յարուցանել մի՛ տար պատասխան (89):

Նկատելի է, որ Հովնաթանը այս բնույթի գրաբարյան (կամ դրաբարա-
երանգ) խոսքին աղատ է տիրապետել և նրանով է ստեղծել իր բանաստեղ-
ծությունների լավագույն հատվածներից մի քանիսը՝ հաճախ շատ վառ պատ-
կերներով, խինդի զգացմունքով հագեցած: Հիշենք խնձուղբի հայտնի տաղե-
րից մեկի սկիզբը.

Յորժամ հոգ դարուն, արև ծագեցաւ,
Հարաւ հողմն հնչեաց, սառն հալեցաւ,
Երկիր կանաչեցաւ, ծառն ծաղկեցաւ.
Խմենք, հղբարք, գինի,
Բանն Աստուած շինի:

Որ հղբարքն նստեն ծաղկեալ ծառի տակ,
Ձեռացներն գինի՝ կարմիր և յիստակ
Քասի մեջն անկանի ծաղիկ սպիտակ:
Խմենք, հղբարք... (169—170) և այլն:

Հովնաթանի ստեղծագործությունների լեզվում միջին հայերենի հատկա-
նիշները բնութագրելիս կանգնում ենք հայտնի դժվարությունների առաջ: Նախ
ակնբախ է, որ «աղավաղված» (կամ «ռամկացած») գրաբարյան խոսքի առ-
կայությունն արդեն միջին հայերենի մի հատկանիշ է, և այսպիսի պարագա-
ներում դժվար է, հաճախ անհնար միմյանցից զատել գրաբարյան և միջին
հայերենի առանձին տարրերը: Մյուս կողմից՝ դժվարություն է առաջանում
միջին հայերենի, արևմտյան հայերենի, ինչպես և Թփղիսի բարբառի ազդե-
ցությունները միմյանցից տարբերելիս, մեկի կամ մյուսի ազդեցության շա-
փը որոշելիս: Երբեմն նման հարցերին կարելի է համեմատաբար ավելի վրս-
տահ պատասխանել, օրինակ՝ էական բայի եզակի երրորդ դեմքի է ձևի գերա-
կշռությունը արարատյան բարբառին (ու Շոռթի խոսվածքին) հատուկ ա-ի
նկատմամբ պետք է գրաբարի ու միջին հայերենի ազդեցությամբ բացատրել,
և ոչ թե արևմտահայ բարբառների, ոչ էլ նույնիսկ Թփղիսի բարբառի (ուր
այդ է-ն նույնպես առկա է) ազդեցություններով: Գրագետ բանաստեղծն այս
դեպքում պարզապես գերադասում է գրական (գրաբարյան) ձևը: Բայց եր-
բեմն այդ ազդեցությունների խնդիրը շատ ավելի բարդանում է. օրինակ, դրժ-
վար է սսել, թե ինչ ազդեցությամբ է Հովնաթանի լեզվում բացարձակորեն
իշխում է-ով բացառականը, որ հատուկ է գրաբարին, միջին հայերենին, արև-
մտահայ բարբառներին (ու գրականին), ինչպես և Թփղիսի բարբառին (մա-
սամբ էլ ն. Ջուղայի բարբառին), և չկա արևելահայ բարբառների հիմնական
մասում, այդ թվում Շոռթի խոսվածքում: Մեղ թվում է, որ վերն ասված
պատճառով այս դեպքում էլ հիմնականը գրաբարի և միջին հայերենի իբրև
գրական լեզուների, ազդեցությունն է, թեև Թփղիսի բարբառի դերն էլ լրիվ
բացառել չի կարելի: Երկար ժամանակ Հովնաթանի Թփղիսում ապրելը չէր
կարող լեզվի հարցում դեր կատարած չլինել, մանավանդ, որ նրա լեզվի մեջ
կան զուտ Թփղիսի բարբառի ակնհայտ տարրեր, ինչպես, օրինակ «Գեղեցիկ
պատկեր իս, դու, իմ պատելի, նս դիւանայ ջունուն հոգ քեզ համար» (ոչ
միայն էական բայի երկրորդ դեմքի իս ձևը, այլ նաև դիւանայ-ն, ջունուն-ը
Թփղիսի բարբառի ազդեցության նշաններ են):

Հարց է առաջանում նաև՝ Հովնաթանի լեզվում կու (կ) հղանակիչի բա-
ցարձակ գերակշռությունը, և ներկայի ձևերի մեծ մասը ոչ թե բանաստեղծի

մայրենի րարրառին հարազատ ում-ով, այլ կու-ով կազմելը Թրփղըսը բար-րառի, թե՛ միջին հայերենի կամ արևմտահայ խոսքի ազդեցությամբ է ա-ռաջացել: Մեր կարծիքով այս դեպքում ևս գլխավորը միջին հայերենի ազ-դեցությունն է, թեև հավանաբար կու-ով ձևերի ինչ-որ մասի գործածությունը կապված է Թփղիսի բարբառի ազդեցության հետ:

Հովնաթանի լեզվում ունենք մի շարք լեզվամիջոցներ, որոնք բնորոշ են միայն միջին հայերենին ու արևմտահայ բարբառներին, ինչպես, օրինակ, որոշ բառեր ու բառաձևեր. աղէկ՝ «Աղէկ խալվաթ է օթազն» (37), «Քեֆերս է հասեալ այսօր խիստ ազեկ» (160) կամ ըսել՝ «Ըսած էիր թէ փայ անիս» (143), փոխառյալ բառերի մեջ ձայնեղների հատկանշական խլացման դեպ-րերը՝ պօյ («Պօյդ նման ոսկէ շամտանի» (7), խապար («Խապար ես զրկել րո բերանէն» (9), «Մի խապար ու գիր չես բերում» (72), պլպուկ կամ բլպուկ («Անուշ լեզուդ բլպուկի խօսի, խաղցր ծիծաղի» (21), պաղչա («Պաղչումն ռաղիկ րաղես» (63), «Որ բացվի մեր պաղչին վարդն» (66), դարիպ («Խմէք դարիպ եղբարց տօլուր ջամն» (167), կումաճ («Քեզնէ շատ ունիմ կուման» (19), տաւտ («Կու շատանայ սիրոյ տարտն» (38), և այլն (Շոռոթի խոսված-րում արդեն այն ժամանակ պետք է եղած լինեն բօյ, խաբար, բլբուկ, բաղչա, դարիք, գուման, դարդ): Արդ, այս կարգի բառերի գործածության մեջ միջին հայերենի, թե՛ արևմտահայ բարբառների ազդեցությունը պետք է որոնել, դժվար է որոշել, թեև դարձյալ ամենահավանականը առաջինի (միջին հայե-րենի) ազդեցությունն է թվում:

Եվ այսպես, միջին հայերենը առկա է Հովնաթանի լեզվի մեջ, միայն՝ հաճախ դժվար ճանաչելի կերպարանքով:

Միջին հայերենը և գրաբարը Հովնաթանի լեզվի ընդհանուր ամբողջու-թյան մեջ, ինչպես քանիցս նշեցինք, ազդեցության բնույթ ունեն, որ երբեմն ուժեղ է լինում, բայց ոչ իշխող: Լեզվական այդ շերտերը մեծ մասամբ գու-սանի լեզուն գրականացնող տարրերի դեր ունեն, իսկ ընդհանուր քերականա-կան հիմքը կամ տրամաբանությունը, ի վերջո, բարբառայինն է, այսինքն՝ աշխարհաբարը, որը և Հովնաթանի ստեղծագործության մեծ մասում հստակ է արտահայտված:

Շուրջ կու գաս վարդի նման գու զարդարած կարմիր ատլասով,
Դու քան ինձ եղեր ես եանուդ՝ էշխի ձեռաց խիստ հաւասով,
Քեզ անուշ լինի դինին, որ կու խմես արծաթէ թասով,
Է՛յ դալում եար, է՛յ բէմուրվաթ, մատանիդ՝ ոսկէ ալմասով (32):

Բարբառային- աշխարհաբարյան քերականական հիմք կոչվածը, անշուշտ, ամենից առաջ առնչված է Հովնաթանի մայրենի խոսվածքի հետ: Բայց այս դեպքում դա Շոռոթի խոսվածքի հատուկ ազդեցություն դիտել ճիշտ չի լինի, քանի որ այդ խոսվածքին, առհասարակ արարատյան բարբառին հատկանշա-կանը՝ այդ ընդհանուր քերականական տրամաբանությունը, ընդհանուր է բո-լոր հայ բարբառներին, որով նրանք հակադրված են գրաբարին, մասամբ էլ միջին հայերենին:

Իսկ բանաստեղծի մայրենի բարբառի մասնավոր ազդեցությունը նրա լեզվի ամբողջության մեջ, թերևս, ամենից ակնառու երևում է բառապաշա-րում. Հովնաթանի լեզվում բարբառային բազմաթիվ փոխառյալ արևելյան բառերի օգտագործումը, կարծում ենք, մեծ մասամբ կապված է Շոռոթի խոս-

վածքի այդպիսի ազդեցության հետ, թեև Թփղիսի բարբառի և միջին հայերենի դերը այս դեպքում նույնպես անտեսել չի կարելի: Թաման, ըոհամ, խաբար, ինսաֆ, բեմուրվաթ, փոշման, երիշ, հէյրան, վախտ, ֆեոմուր, արխալուղ, փերիշան, թուման, դալամ, ֆաֆիր, դանաֆիլ, քազայ, եաբալու, բազար, սոհբար, դուլբանդ, հաբամի, շաբսաւ, ումր, սէֆիլ, էֆերիմ, շիմաս և բազմաթիվ այլ բարբառային փոխառյալ բառեր եղել են թե՛ Հոփնաթանի մայրենի խոսվածքում և թե՛ հայկական մի շարք այլ բարբառներում ու խոսվածքներում: Անշուշտ, բնական է, որ նրանք Հոփնաթանի երգերի լեզվի մեջ տեղ պիտի գտնեին նախ իբրև բանաստեղծի մայրենի բարբառի բաղադրիչներ:

Մի շարք այլալեզու մակդիրներ և արտահայտություններ էլ այն ժամանակ շատ էին տարածված գուսանական արվեստի մեջ և բնականաբար պետք է տեղ գտնեին նաև Հոփնաթանի լեզվում. օրինակ շամս ու դամար. «Նրեսդ նրման է շամս ու զամարայ» (42), դալամ ունքեր («Ղալամ ունքերդ կապել է հրեղեն կամար» (45) և այլ մակդիրներ ու համեմատություններ կարելի է գտնել XVIII—XIX դդ. գուսանական շատ երգերում, հատկապես Թփղիսի և Երևանի դպրոցների նման արժեք ունեն նաև թուրքերեն ամբողջական արտահայտությունները, ինչպես. «Գեօզլարն դարիեայ դուր, ուման» (76), «էշխնայ հարադան էփ-փենիրդան, հաղլու շորաքտան» (107), «Գեդախ բազայ, Բանվաւշայ, սմբուլ, Ղրրմզի դուլ» (73) և այլն:

Վերն ասվել է, որ Ն. Զուղայի բարբառի ազդեցությունը նույնպես նկատելի է Հոփնաթանի լեզվում, թեև շատ թույլ. ունենք, օրինակ, «Մնացել ամ հէյրան ու մաթ» (19), «Այ հաւեր, ես ձեզ տէր ամ» (139), «Յաճ ամ, Սիրտս կուզէ թաք մուրթաճամ» (141) և այլն: Ծիշտ է, Ն. Զուղայի բարբառի տարրերը մեծ մասամբ ոճավորման (երգիծական) կամ հանգավորման դեր ունեն, բայց նրանց առկայությունը փաստ է:

Ահա այսպիսի բազմազան տարրերից է բաղկացած Հոփնաթանի լեզուն, և միևնույն երգում, միևնույն տան մեջ կարելի է գտնել գրարարի, որևէ բարբառի, միջին հայերենի, թուրքերենի, ձևավորվող աշխարհաբարի միալեզուությունը, հաճախ վերջինի ընդհանուր գերակշռությունը: Ահա գրաբարի, աշխարհաբարի, թուրքերենի մի խառնուրդ Հոփնաթանի լավագույն երգերից մեկի մեջ.

Այսօր ծագեցաւ նոր արև,
Իմ սիրելին ետ ինձ բարև,
Սրտիս բուսաւ կանաչ տերև
Նազանի, ման զարիր ամ,
Թոքմա դանրմ,
Աղամ, շանրմ (43):

Մի այլ օրինակ բարբառի, գրաբարի և միջին հայերենի հարևանության.

Եկայք այսօր, որդիք մարդկան,
Ցնծացուք ձայնիւ միաբան,
Ձի եկեալ է բարեկենդան.
Ածէք, խմէք կարմիր կթխան,
Դնա, լից, բեր գինու շուշան,

Ժամանակ է թազայ գառան,
Անուշ հոտ կու գա ամառան... (185) և այլն:

Ահա ցինք, որ գրաբարյան՝ սիջին հայերենի կնիք ունեցող լեզվով Հովնաթանը կարողանում է բանաստեղծական առաջնակարգ խոսք ստեղծել: Դրա պատճառներից է հավանաբար հայ միջնադարյան բանաստեղծության պահպանված ուժեղ ավանդույթը և Հովնաթանի բանաստեղծական մտածողության մեջ այդ ավանդույթի գրաված տեղը: Այլ խոսքով, Հովնաթանի լեզվական այդ որակը մի նորաստեղծ արհեստական լեզու չէր, այլ ավանդույթ ունեցող բանաստեղծական խոսք, որը և բնական է հնչում բանաստեղծի խնճուղքի տաղերում:

Աշխարհաբար կամ աշխարհաբարին շատ մոտ լեզվով Հովնաթանի հորինած երկերը, չնայած իրենց լեզվական բաղմատարրության, մեծ մասամբ նույնպես պատկերավոր են, հաճախ շատ բանաստեղծական, մանավանդ այն դեպքում, երբ ժողովրդական խոսքին ավելի ազատ տեղ է տրվում: Ընդհանրապես աշխարհաբարի պատմությունը ցույց է տալիս, որ հայերենի լեզվական տարրեր շերտերի տարրերից բաղադրված լեզուն իր արհեստականության միջոցով և խոսքի անկաշկանդ բանաստեղծականությանը: Բայց որոշ առավել տաղանդավոր ստեղծագործողներ հաղթահարում են այդ պատենները: Այդպիսի բանաստեղծ է Նաղաշ Հովնաթանը: Նա իր «համադրված» աշխարհաբարով, որ գլխավորապես իշխում է սիրո տաղերի մեջ մեծ նպաստ է բերել հայ նոր գրական լեզվի (արևելահայ) ձևավորմանն ու քաղաքացիական իրավունքի հաստատմանը: Հովնաթանի տաղանդը լեզվական այդ որակով ստեղծել է հայ բանաստեղծության հրաշալի գոհարներ: Լավագույն օրինակներից է «Տաղ սիրոյ, Նաղաշ Յովնաթանէ «Յայտնեցաւ գարուն» ձայն է» երգը.

Պատկեր մի տեսի լուսնի նման,
Ալքերն պայծառ արեգական,
Ունքերն կամար խիստ պատուական,
Կու սիրեմ, զալում, զալում,
Ինձ մոտ կու բերեմ, զալում» (6):

Զղացմունքի ուժի, բանաստեղծական խոսքի անկաշկանդ ելեջման գեղեցկությամբ սա հայ դրականության սիրային լավագույն բանաստեղծություններից է.

Ասել եմ՝ Տեսր գրէ տաղով,
Մաղկէ լաշվարդ ոսկի վարաղով.
Դրել եմ, կապել՝ սուրմայ բաղով,
Կուղարկեմ, զալում, զալում,
Փափակ եմ, զալում, զալում:

Աշխարհաբարը ներքուստ պահպանել է ժողովրդական խոսքի արտահայտչական բնականությունը: Բանաստեղծության ժողովրդայնությունը նրա պատեմ, անշուշտ, գուսանական արվեստի և հայ ժողովրդական երգի միաձուլ օգտագործումը: Օրինակ, երգի զղացմունքայնության սաստկացմանը շատ վճռում ամեն տան վերջում եղած անընդհատ նորոգվող երկտող կրկնաբար: Բերում ենք այդ երկտողներից մի քանիսը, որոնց զոդությունն, իհարկե, ամբողջությամբ բացահայտվում է յուրաքանչյուր տան մեջ.

Մարաւ կու կանչեմ հարայ, զալում,
Ինձ ըռհամ արա, զալում:
Քեզ ո՞նց մոռանամ, զալում,
Նա ո՞նց հեռանամ, զալում:

Ինձ խեղճորի զաւում,
Մալբարացի, զաւում:

Տալով Հովնաթան Նաղաշի ստեղծագործությունների լեզվի այս համառոտ նկարագրությունը՝ իբրև ամփոփում նշենք, որ այդ լեզվի մի ընդհանուր և կարևոր առանձնահատկությունն է «արտաքուստ» գուսանի մայրենի բարբառից հեռացած լինելը՝ մի շարք դեպքերում դեպի միջին հայերենի և դրաբարի լեզվամիջոցները, բայց և հիմնականում բարբառային-ժողովրդական քերականական մտածողության պահպանմամբ, որը ամենից առաջ կարող էր առնչված լինել բանաստեղծի մայրենի բարբառի հետ: Հովնաթանյան այդ կերպ գոյացած աշխարհաբարը XVII—XVIII դդ. բոլոր հայ ստեղծագործողների լեզվից ամենից ավելի շատ նպաստեց մի կողմից գուսանական աշխարհաբարի ավանդների ստեղծմանը, մյուս կողմից հայ նոր գրական լեզվի (արևելահայ ճյուղի) զարգացմանն ու հաստատմանը: Դրա պատճառը նախ Հովնաթանի բանաստեղծական մեծ օժտվածությունն էր: Կարևոր է այն, որ Հովնաթանի երգերը հայոց մեջ շատ տարածված են եղել, անընդհատ երգվել են խնձուղներում, ընկերական հավաքություններում, հանդեսներում և այլուր: Սրանով արդեն Հովնաթանյան աշխարհաբարը լեզվական ավանդույթ է ըստեղծել: Հետաքրքրական է նշել, որ նրա երգերից մեկը՝ «Տաղ ի վերայ Գուրջըստանայ դօղալներին»-ը տպագրվել է հեռավոր Կալկաթայում 1830 թ. (Ստ. Ավետույանի կազմած «Սիրակարկաջ» երգարանի մեջ)՝ դառնալով արևելահայ տպագիր չափածոյի առաջնեկներից:

Վերջում կարևոր ենք համարում նշել, որ մի քանի բանաստեղծություններ, որոնք համարվում են Հովնաթան Նաղաշինը, լեզվական այնպիսի որակ ունեն, որ նրանք լինել չեն կարող:

Նախ այդպիսին է «Պատվական եղբայրներ, ինձ մի մեղադրեք» տողով սկսվող երգը, որ առաջին անգամ հրապարակվել է Գ. Թարվերդյանի կազմած «Հայ աշուղներ» ժողովածուի մեջ (1937, էջ 4):

Երգի լեզվական ամբողջ բնույթը, որ շատ մոտ է այսօրվա գրական հայերենին, Հովնաթանյան չէ: Առաջին տողն արդեն, արդի գրականի կանոնավոր ձևերով, նույնիսկ այնտեղի միայն եղբայրներ, ձևը ասում են, որ դա Հովնաթանի հորինածը չէ (Հովնաթանի վավերական տաղերում կա միայն եղբայր կամ եղբայրք, բայց ոչ՝ եղբայրներ): Այնուհետև՝ այնպիսի խոսքեր, ինչպես «Սիրույս պահանջներին է՛լ չդիմացա», «Թե խիղճ ունեք, հասեք, ինձ մի ճար արեք, ճամբա գցեք, ինձ սիրուհուս մոտ տարեք» և այլն, որոնք բնորոշ են տաղի լեզվին, Հովնաթանյան չեն բնավ: Սեր արտահայտելու այսպիսի պարզունակ, երբեմն գոհհիկ եղանակները, այսօրվա գրական հայերենին այդ աստիճան մոտ ընդուն հարկավ Հովնաթանինը չեն:

Տաղի մեջ չկա Հովնաթանի լեզվին շատ բնորոշ արևելյան փոխառյալաբարբառային բառերի առատությունը (այդպիսիներից միայն մի բառ կա՝ էշխ-ը), չկա նաև միջին հայերենի բնորոշ Հովնաթանյան երանգը: Տաղի տների վերջում եղած կրկնաբար իր պարզունակությամբ («Սիրում եմ, սիրում եմ, վառված եմ, ավա՛ղ, Մեկ սիրունի էշխով տարված եմ, ավա՛ղ») նույնպես Հովնաթանյան երանգ չունի, թեև, հավանաբար Հովնաթանին նըմանվելու ճիգով է հորինված («էշխով տարված»): Երկրորդ տան սկիզբը՝

«Հորժամ կանաչ դարնան դալն իմացա» ակնհայտորեն Հովնաթանի նմանողությամբ է հորինված, բայց նրանք լինել չի կարող. Հովնաթանն ունի՝ «Նոր ծաղկեցաւ ծառն, գարուն էհաս», «Նոր գարուն է, հնչեաց հարաւ», «Գարուն եղև, քաղցր խօսի բլբուլն», «Գարուն որ եղև ամսոյն ապրիլի», «Յայտնեցաւ դարուն, հարաւ հնչեաց», «Յաւուրս դարնան եղանակին», «Յայտնի երևեցաւ քաղցրաշունչ գարուն», «Յորժամ եղև գարուն, արև ծագեցաւ»: Իսկ վերոհիշյալ «Կանաչ դարնան գալն իմացա» արտահայտությունը բոլորովին տարբեր է լեզվաոճական իր հատկանիշով, և Հովնաթանինը լինել չի կարող, իսկ ըսկրորում դրված հոգծամ-ը չի փոխում նոր ժամանակներում (հավանաբար՝ XX դ.) հյուսված խոսքի բնույթը:

Այս տաղը իր բովանդակությամբ էլ անհրապույր է, գեղարվեստական մակարդակը ցածր, ոչ հովնաթանյան:

Կարելի էր ենթադրել, թե երգը Հովնաթանինն է, բայց բանավոր բազմամյա փոխանցումներով է այդ աստիճան անճանաչելիորեն փոխվել: Բայց մեղթվում է, որ դա պարզապես Հովնաթանինը չէ: Իսկ մի հոգծամ, մի էշխ, մի սիրելիւյս և վերջում նշանավոր գուսանի անունը պարունակող «Իմացեք մեռած է Նաղաշ Հովնաթան» տողը պետք է, որ ավելացված լինեն երգին հովնաթանյան «տեսք» տալու համար:

Գ. Թարվերդյանի հիշյալ ժողովածուն այս հարցում թյուրիմացության աղբյուր է դարձել, և նոր ժամանակների այս տաղը այդ ժողովածուի պատճառով բանասիրության մեջ բերվում է իբրև XVIII դ. հայ բանաստեղծության օրինակ և վաղ աշխարհարարի նմուշ:

Հովնաթանի բանաստեղծությունների 1951 թ. հրատարակության մեջ (էջ 197—198) տեղ գտած տաղերից մեկը կոչվում է «Ջուղայեցոց հայրենի պարզ լեզուն այ, դոր կու պարծենան» (սկզբնատողը՝ «Ջուղայեցիք անք, կու պարծենք»), հորինված է բարբառով, և նրանից ելնելով Հովնաթանի լեզվի մասին բանասերները տեսակետներ են հայտնել: Մեր կարծիքով այս տաղը ևս Հովնաթանինը չէ: Տաղի մեջ չկա Հովնաթանի անունը, և չի համոզում կազմողների ու ծանոթագրողների այն կարծիքը³, ըստ որի Հովնաթանն այս տաղը հորինել է Ջուղայի բարբառով իբրև ծաղրանմանություն (պարոդիա): Նախ՝ երգի բովանդակությունն այնպիսի տպավորություն է ստեղծում, որ Ջուղայի բարբառով ոչ թե կողմնակի մեկն է երգիծել, այլ մի ջուղայեցի. այսինքն՝ դա մասամբ ինքնաերգիծանք է, որ այն ժամանակ տարածված էր գուսանական (և ոչ միայն գուսանական) երգերում: Ապա՝ տաղի լեզուն նույնպես բարբառի օգտագործման այնպիսի ուրակ ունի, որ Ջուղայեցու հորինվածքի է նման. «Մեք շամբեցոց անք շատ խօվան, Գրափառքում տիր խամով ան. Ասլելէն՝ ասման ամ կասեն, Մեզ պէս դրոց լեզվի ծով ան»: Այսպիսին է տաղի լեզուն, որ չի կարող Հովնաթանի ծաղրանմանությունը լինել:

Ծանոթագրության մեջ ասված է, որ այս տաղի՝ Հովնաթանի հեղինակություն լինելը հաստատվում է նրանով, որ այնտեղ հիշվում են Շոռոթի շրջակայքի բնակավայրերը⁴: Այդ հիշվող տեղանուններն են Դաշտ, Ղափան,

³ Ն ա ղ ա շ Հ ո Վ ն ա թ ա ն, Բանաստեղծություններ, էջ 273—274:

⁴ Նույն տեղում:

վան, Գաղ (գաղկեցիքն), Ագուլիս, Շամբ, որոնք որքան Զուղայի (խոսքը հին Զուղայի մասին է), նույնքան էլ Շոռոթի շրջակայքում են գտնվում⁵։

Նաղաշ Հովնաթանի ստեղծագործությունների շարքից նրան չպատկանող տաղերը հանելու հետևանքով պարզություն է մտնում բանաստեղծի երկերի լեզվա-ոճական բնութագրի մեջ։

Այդպիսով, Նաղաշ Հովնաթանի լեզուն քերականությամբ ու բառապաշարով բաղմաշերտ է՝ գրաբարի, միջին հայերենի և բարբառների միահյուսում, մի շարք դեպքերում միջին հայերենի նկատելի երանգով, բայց ավելի հաճախ աշխարհաբարի, այսինքն՝ նոր գրական հայերենի բնույթով, նրա քերականական տրամաբանությամբ։ Հովնաթանի լեզուն իր ղգալի մասով XVII—XVIII դդ. հայոց նոր դրական լեզվի մի տարբերակն է։ Ոճական տեսակետից այն հայ ժողովրդական բանաստեղծության, միջնադարյան տաղասացության և նոր գուսանական (աշուղական) ոճերի միասնություն է՝ վերջինի գերակշռությամբ։ Քանի որ հայ նոր գրականության մի կարևոր հատկանիշը, որ նրան տարբերում է միջնադարյան գրականությունից լեզուն է՝ աշխարհաբարով կամ բարբառով հորինված լինելը, ապա Հովնաթան Նաղաշը մասամբ կապված լինելով միջնադարյան գրականության հետ, շատ ավելի հայ նոր գրականության ներկայացուցիչն է, նրա սկզբնավորողը Ն. Զուղայի XVII—XVIII դդ. գուսանների (Էգաղ, Արղունի) հետ միասին, փնչպես նաև հայ նոր բանաստեղծության առաջին ամենախոշոր դեմքը։

ХАРАКТЕРИСТИКА ЯЗЫКА ПРОИЗВЕДЕНИЙ ОВНАТАНА НАГАША

Р. А. ИШХАНИЯН

Р е з ю м е

Исследование некоторых особенностей лексики и грамматики языка стихотворений Овнатана Нагаша (1661—1722) приводит к выводу, что несмотря на наличие в этом языке древнеармянского и среднеармянского языковых слоев, иногда весьма значительных, общая грамматическая основа наибольшей части сочинений поэта является диалектной. Язык большинства стихотворений Овнатана — это вариант новоармянского литературного языка (ашхарабара) конца XVII—начала XVIII вв. Сам Овнатан Нагаш — один из родоначальников новой армянской литературы, первый ее крупный представитель.

⁵ «Բանաստեղծությունների» մեջ այս տաղը մտել է «Լուծայի» 1899 թ. Ա գրքից (էջ 275—276)։ Ըստ ծանոթագրության (էջ 282) կարելի է ենթադրել, որ տաղը Ստեփան Դաշտեցունն է։ «Բանաստեղծությունների» կազմող-ծանոթագրողներից մեկը՝ Աս. Մնացականյանը մեղ բանավոր հայտնեց, որ ըստ իր ունեցած նյութերի տաղն իրոք Ստեփան Դաշտեցունն է։